

ԱՐԳԱՐՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱՑՈՒՄԸ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

Լ. Շ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, Մ. Վ. ՄԿՐՏՅԱՆ

Մարդկային հասարակության գոյության ողջ ընթացքում արդարության գաղափարը մշտապես եղել է տեսական գիտությունների ուշադրության առարկան: Թե փիլիսոփաները, թե պատմաբանները, սոցիոլոգները, տնտեսագետները և գիտության մյուս բնագավառների ներկայացուցիչները փորձել են բացատրել այդ երևույթի էությունը, դրա ձևավորումը, զարգացումը, հեռանկարները:

Գիտական քննարկումների մեջ կարելի է հանդիպել արդարության գաղափարի տարբեր, երբեմն նույնիսկ միմյանց հակասող բնութագրություններ: Մտածողների մի մասը արդարությունը համարում է բարու հասկացողության արտահայտություն՝ հաճախ պահանջելով յուրաքանչյուր դեպքում պարզաբանել էությունը¹: Նման մոտեցումը, առաջնություն տալով սուբյեկտներին, ելնում է նրանց շահերից և արդարությունը դիտում բարի գործեր կատարելու և դրանով հասարակության շահը մեծացնելու անհրաժեշտություն: Դա, իհարկե, լավ է: Սակայն միշտ չէ, որ անհատը գործում է արդարության մղումով, միշտ չէ, որ նրա գործողությունները ներդաշնակվում են հասարակության շահերի հետ:

Մտածողների մյուս՝ առավել սովոր մասը, արդարությունը գնահատում է պահի պահանջով²: Ինչ տվյալ պահին արդար է, մեկ ուրիշ դեպքում կարող է այդպիսին չլինել, ուրեմն՝ գաղափարը պետք է դիտել շարժման ու զարգացման ընթացքի մեջ, և տվյալ պահին արդարության մեկընդմիշտ շահանիշ համարվող երևույթը մշտական չէ բոլոր ժամանակների համար: Համաձայնելով նման գաղափարներին ընդհանրապես՝ կարծում ենք, որ միշտ և բոլոր դեպքերում չի կարելի այն ճշմարիտ համարել, քանզի կան երևույթներ, որոնք գոյատևում են մշտապես և ճշմարիտ են բոլոր ժամանակների համար: Օրինակ՝ արդար է և հաստատուն, երբ մարդն ապրում է իր աշխատանքով, երբ ժողովուրդն ապրում է իր պատմական հայրենիքում, երբ բարի սովորությունները փոխանցվում են սերնդեսերունդ և այլն:

Արդարության հակադարձ իմաստը անարդարությունն է, որը նույնպես բխում է պատմական ժամանակաշրջանի պահանջներից (սակայն երբեմն շեղվելով դրանից): Պայթարը անարդարության դեմ արդարության հաղթանակի համար է, նրա հաստատման համար: Ընդ որում, արդարության հա-

¹ Տե՛ս Օ. Գ. Дробецкий, Проблемы нравственности. М., 1977 էջ 57, Է. В. Белкин, Человеческий фактор общественного производства. М., 1989, էջ 17—19.

² Տե՛ս Վ. Մարտ, Ձր. էնգելս, Ընտիր երկեր, հ. 2, Եր., 1973, էջ 487, 491, Վ. Մարտ, Կապիտալ, հ. 3, 1-ին մաս, Եր., 1947, էջ 327, Վ. Ի. Անիտ, Նիժ, հ. 7, էջ 211—251, Շ. Փոշեր, Բ. Դորնշու, Բ. Մանենզի, Экономика, М., 1993, 96—110, 386—388, Փ. Սամուելսոն, Ու. Նորդհաուս, Տնտեսագիտություն, հ. 1, Եր., 1995, էջ 50—52:

մար պայքարի հասունացումը անհանդուրժելի է դարձնում անարդարության գոյությունը, և ինչպես Տակվիլն է ասում, «համբերություն մը հաղթահարվող անխուսափելի շարիքը անտանելի է դառնում այն մտքից, որ դրանից կարելի է ազատվել»³: Եթե համաձայնեք այդ գաղափարի տրամաբանությանը, արդարության հաստատումը հնարավոր է դառնում դրա համար անհրաժեշտ պայմանների հասունացման ժամանակ: Կարծում ենք, որ հաճախ արդարության գնահատականը որոշվում է պատմական ժամանակաշրջանի պահանջով՝ նկատի առնելով երևույթի անցյալը, ներկան և հեռանկարը: Գնահատելով տվյալ պահի համար արդարության ճանաչումը՝ չպետք է մոռանալ ապագայում նրա դրսևորման հեռանկարները, այլապես կարող է վտանգվել ինքը՝ գաղափարը, և վերափոխվել իր հակադրությանը: Երևույթը առավել վտանգավոր է դառնում, երբ ընդգրկում է լայնածավալ միջավայր (հասարակություն, սոցիալական խավեր, երկրներ և այլն): Դա կարող է արտահայտվել քաղաքական, գաղափարական, տնտեսական կատալիզմներով՝ առանձին-առանձին կամ միաժամանակ: Սոցիալական հեղաշրջումներ պահանջող պահը կարող է շարդարացվել հեռանկարի առումով և մեծ վնաս պատճառել գալիք հասարակությանը: 1917 թ. Ռուսաստանում հեղափոխության իրականացումը պահի պահանջն էր, որը սակայն ի գորու չեղավ ապահովելու հետագա ժամանակաշրջանում հասարակական երևույթների համաչափ զարգացումը: Կամ՝ ընդհակառակը, շահասունացած պայմաններում արդարության պահանջի իրացումը կարող է խաթարել դրա օրինաչափ զարգանալու հնարավորությունը: Այդպես եղավ մեզ մոտ, երբ 1991 թ. գարնանամուտին հողային ռեֆորմով, առանց նախապատրաստական աշխատանքների, միանգամից, հողը բաժանվեց գյուղացիներին, որոնք, սակայն, պատրաստ չէին այն ընդունելու: Վերափոխումների ճանապարհը ուղեկցվեց արտադրողական ուժերի քայքայումով: Գյուղացին անզոր կանգնեց (և ցայսօր կանգնած է) իր երազած հողի առաջ:

Հասարակական առումով արդարության գաղափարը կարող է հանդես գալ որպես քաղաքական, սոցիալական, տնտեսական, ինչպես նաև պատմական, ազգային, հոգևոր և այլ արդարություն, որոնցից յուրաքանչյուրը գործելով առանձին՝ միաժամանակ մյուսների հետ գտնվում է սերտ կապի մեջ: Ղարաբաղյան հարցի քաղաքական լուծումը՝ երկրի անկախացումը, հիմնավորվում է պատմական, ազգային, տնտեսական արդարության պահանջներով, բնակչության բոլոր խավերի նյութական ու հոգևոր զարգացման շահերով, ամբողջ երկրի տնտեսական վերելքի շահերով: Կամ շուկայական հարաբերությունների զարգացումը կոչված է տնտեսական, սոցիալական, քաղաքական և այլ խնդիրները լուծելու հրամայականով: Եթե քաղաքակրթված երկրները վաղուց արդեն անցել են ստուգված այդ ճանապարհով, ապա որևէ ձևով դրանից խուսանավելը մեծ վնաս կհասցնի ցանկացած երկրի: Այդ ձեռնարկությունը ընդունելը տնտեսական արդարություն հաստատելու օրյեկտիվ պահանջ է:

Արդարությունը ներառում է սոցիալ-տնտեսական այն հարցերը, որոնց առնչվում է մարդը իր կենսագործունեության ընթացքում: Կարող ենք թվարկել դրանցից մեկ փունջ՝ մարդու կրթությունն ու որակավորումը, համապատասխան աշխատանքով բավարարումը, վարձատրությունը, տրանսֆերտային վճարներից օգտվելու հնարավորությունները և այլն: Դրանցից յուրաքանչյուրի դեպքում արդարությունը նյութական և հոգևոր բարիքներով մարդու պահանջմունքների ապահովումն է: Մեր կարծիքով, բոլորովին էլ ան-

³ Таквиль, Старый порядок и революция. М., 1896, с. 197.

հրաժեշտութիւն շկա համադրելու արդարութեան տարբեր ձևերը մեկ ընդհանուր գաղափարի մեջ: Ընդհակառակը՝ դրա տարբեր ձևերի ճանաչումն ու օգտագործումը առավել նպատակասլաց է դարձնում առարկայի ուսումնասիրութիւնը և մեզ մոտեցնում արդարութիւնը բացահայտելուն: Արդարութեան գաղափարի ճանաչումն ու կիրառումը օրինադիր և գործադիր մարմինների կողմից հանդիսանում է իրավական պետութեան հիմքը, այն առանցքը, որի շուրջը պարուրած է կայտալեն ամբողջ հասարակութեան, դրա առանձին խմբերի կամ մարդկանց շահերը: Հասկանալի է, որ յուրաքանչյուրի և բոլորի տնտեսական շահի անհրաժեշտութեամբ կյանքի կոչված քաղաքականութիւնը կարող է նպաստել գաղափարի լիարժեք իրագործելուն: Իսկ դա հնարավոր է արդարութեան իրավական նորմերի գիտական մշակումով ու կիրառումով: Կարևորը կյանքում արդարութեան գնահատումն ու իրականացումն է, դրա նկատմամբ հասարակութեան անաչառ վերաբերմունքը, ընդհանուր առաջադիմութեան մեջ նրա դերի ճանաչումը:

Չի բացառվում նաև անհատի, խմբի և կամ հասարակութեան կյանքն ուսումնասիրելիս արդարութեան իրացումը տեսնել նրա երկու կամ առավել ձևերի համատեղ քննարկման միջոցով: Օրինակ, բնակչութեան բարեկեցութեան կամ կենսամակարդակի ցուցանիշի քննարկումը կպահանջի ինչպես տնտեսական (արտադրութեան ծավալ, գներ, եկամուտներ և այլն), այնպես էլ սոցիալական (աշխատանքային, բնակարանային պայմաններ, առողջապահութեան, կրթութեան դրվածք) մոտիվների համատեղ ուսումնասիրութիւն, արդարութեան տնտեսական ու քաղաքական կամ քաղաքական ու իրավական ձևերի զուգակցում: Նման պարագայում կունենանք սոցիալտնտեսական, տնտեսաքաղաքական կամ իրավաքաղաքական արդարութեան ցուցանիշներ: Խնդիրը ճշմարտութիւնը բացահայտելն ու բնակչութեան մեծամասնութեան արդարացի շահերը գիտակցելը, դրանց ճիշտ իրացնելն է: Որպես օրինակ կարելի է ներկայացնել վերջերս Երևանի կոնյակի գործարանը օտարերկրյա ֆիրմային վաճառելու փաստը: Մեր կարծիքով ազգային արժեք համարվող ձեռնարկութիւնը նման ցածր գնով ֆրանսիացիներին վաճառելը առնվազն ազգային, պատմական, նաև տնտեսական արդարութեան խեղաթյուրում էր: Իսկ ռազմավարական կարևորագույն նշանակութեան կապի միջոցները հիմնական մասով օտարերկրյա ֆիրմային վաճառելը կամ «Հայկական ավիաուղիների» սպասվելիք սեփականաշնորհումը անհարիր է հանրապետութեան իրավաքաղաքական արդարութեան սկզբունքին:

Տնտեսական արդարութիւնը հող է ստեղծում քաղաքական, ազգային, պատմական, սոցիալական արդարութեան համար: Հանդես գալով մարդու կենսագործունեութիւնը ապահովելու, անհրաժեշտ նյութական պայմաններ ստեղծելու և բարիքների արդարացի բաշխում իրականացնելու անհրաժեշտութեամբ՝ տնտեսական արդարութիւնը իր վրա կրում է երկրի տնտեսութիւնը զարգացնելու ծանր լուծը: Հիմնական հարցը տնտեսական առաջադիմութեան միջոցով բոլոր սոցիալական խավերի նյութական ապահովութեան բարելավումն է՝ նվազագույն սահմանից մինչև միջին մակարդակի գերակայութիւն:

Նախ նշենք, որ վերջին տարիներին շուկայական տնտեսութեան պահանջներին համապատասխան օրինական (երբեմն նաև՝ ոչ օրինական) ճանապարհով խորացել է բնակչութեան շերտավորումը: Կանոնավոր հասարակութեան մեջ ունևորների, միջին խավի և ունևորների տեսակարար կշիռը գերակշռում է հօգուտ միջին խավի: Դա մեծապես մեղմացնում է շերտավորման ծայրահեղութիւնը, երբ կարծես թե չի շեղվում աղքատների ու հարուստների ունեցվածքի, դրանց ապրելակերպի անջրպետը: Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետութիւնում իրականացված գործընթացները

վկայում են նշված անչրպետի մեծացումն ու խորացումը: Արդեն մի քանի տարի է, ինչ շարունակվում է պետական ունեցվածքի սեփականաշնորհումը: Անցած տարիներին սեփականաշնորհվել է տնտեսութայան տարբեր ճյուղերի 1413 ձեռնարկություն, ինչպես նաև մեծ քանակության «փոքր օբյեկտներ»⁴: Ճիշտ է, սեփականաշնորհված գույքի արժեքը հիմնականում վճարվել է սեփականաշնորհման սերտիֆիկատներով, որոնք բաժանված էին ամբողջ բնակչությանը, սակայն այդ հարցում պետության անհասկանալի քաղաքականության հետևանքով բնակչության ճնշող մասը զրկվեց իրեն հատկացված ունեցվածքից եկամուտներ ստանալու հեռանկարներից՝ ստիպված ցածր անբերով վաճառելով իր բաժինը:

Դրա հետևանքով 1997 թ. բաց բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերի 60 %-ը տնօրինվեց բաժնետերերի միայն 2,5 տոկոսի կողմից: Խորհելու տեղիք է տալիս այն, թե նախկին ԽՍՀՄ-ի տնտեսության փլուզման, 1988 թ. երկրաշարժի ավերածությունների, սովետային տնտեսության աշխուժացման պարագայում ինչու պետական այրերը ընդառաջ գնացին ոչ միայն փոքր, այլ նաև դեռևս գործող միջին ու խոշոր ձեռնարկությունների սեփականաշնորհմանը: Նման քայլը ինչ-որ շափով արդարացի կարելի է համարել, եթե նախօրոք պետության կողմից մշակվեին և առաջադրվեին այդ ձեռնարկությունների գործունեության հետագա պայմանները: Կատարվեց հակառակը՝ կարծես անտեսանելի ձեռքով պետության աչքի առաջ կողոպտվեց սեփականաշնորհման ենթակա օբյեկտների ունեցվածքը, իջեցվեց դրանց մեկնարկային գինը: Ժողովուրդը կորցրեց տասնյակ տարիներ իր աշխատանքով ստեղծած հարստությունը, որը կենտրոնացավ մի խումբ մարդկանց ձեռքում: Հասկանալի է, որ նման անարդարությունը պաշտպանելու դեպքում անհիմն են իրավական, արդար հասարակության մասին մեր այսօրվա նկրտումները:

Տնտեսական արդարության ելակետը մարդ անհատի գոյության համար արժանավայել պայմանների ստեղծումն է: Մինչև վերջին տարիները Հայաստանի Հանրապետությունում տնտեսական արդարության արգելակիչ գործոն է նաև դրամի շարունակվող արժեզրկումը, որը խիստ բացասական ազդեցություն ունի վերարտադրության ամբողջ գործընթացի վրա: Խաթարվում է համախառն ազգային արդյունքի վերարտադրության փուլերի ներդաշնակ կապը: Արտադրության միջոցների և սպառման առարկաների գների կտրուկ աճը նվազեցնում է արտադրության, ուրեմն նաև սահմանափակում սպառման հնարավորությունները: Իջնում է հատկապես բնակչության գնողունակությունը, որը, որպես արտադրության խթան, չի կարողանում կատարել իր սովորական դերը: Վերարտադրության շորս տրամաբանական փուլերից (արտադրություն, բաշխում, փոխանակություն և սպառում) կարծես թե առանձնանում է փոխանակությունը, որը ցայսօր հանդես է գալիս որպես հասարակական կյանքի հիմնական գործոն: Բնակչության զգալի մասի գործունեությունը միանգամից տեղափոխվել է առևտրի բնագավառ:

Արտադրության շափերի կրճատումը, համախառն ներքին արդյունքի նրվազումը հատկապես պատերազմի պայմաններում մեծացնում են պետության ծախսերը, որոնք ծածկելու համար միակ գործիքը դրամի էմիսիան է: Շարունակվում է արտադրության ծավալի համեմատ դրամի զանգվածի մեծացումը, ուրեմն նաև՝ արժեզրկումը: Նոր հիմքեր ստեղծվեցին տնտեսական (նաև սոցիալական) անարդարության համար: Հասարակության անդամների փոքր մասի մոտ եկամուտների աճը գերազանցեց գների աճին, իսկ մյուս՝

⁴ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը», Եր., 1999, էջ 100:

մեծ մասի մոտ, ընդհակառակը, գների աճը մեծապես գերազանցեց եկամուտների աճին: Հատկապես հարվածի տակ հայտնվեցին ոչ նյութական արտադրության ոլորտի աշխատողները (բյուջետայինները) և կենսաթոշակառուները, քանի որ նրանք հիմնականում գնորդներ են և շուկան վնասը փոխհատուցելու հնարավորություն: Իսկ բնակչության այն մասը, որը զբաղվում է անշարժ գույքի, մետաղների, արվեստի գործերի, ապատեղակայված մեքենասարքավորումների վերավաճառքով, անարդարացիորեն յուրացնում էր հասարակության ունեցվածքը: Հասկանալի է, որ երկրում նշված երևույթների տարածումը (զանգվածային չափով) նույնպես խորացնում է արդարության գործընթացի անջրպետը: Դրա մասին են վկայում փաստերը: Այսպես, 1997 թ. դրամական զանգվածի աճի (մոտ 30 %) և ԱՄՆ-ի դոլարի նկատմամբ փոխարժեքի արժեզրկման (մոտ 14 %) պայմաններում սպառողական ապրանքների գների ինդեքսը 1996 թ. դեկտեմբերի նկատմամբ աճեց մոտ 22 % (1995—96 թթ. 5,7 %-ի դիմաց): Հատկապես մեծ չափերով աճեցին (44,2 %) վճարովի ծառայությունների գները: Որպես դրական երևույթ պետք է նշել այն, որ ներկայումս Ռուսաստանում շարունակվող տնտեսական ճգնաժամի պայմաններում ՀՀ կառավարությունը դրամի արժեզրկումը առավելապես ձգտում է մեղմել՝ սահմանափակելով վալյուտային ներխուժումը և համապատասխանաբար նպաստելով ներքին պահպանման օգտագործելու շրջանորհիվ տնտեսությունը աշխուժացնելու միտումներին: Եվ դա հասկանալի է, քանզի ելքը արտադրության ծավալների մեծացումն է, արտաքին առևտրի աշխուժացումը, դրա հաշվեկշռի ակտիվացումը (արտահանման գերակայությունը ներմուծման նկատմամբ): Արդեն 1997 թ. նկատվեցին տնտեսության կայունացման և վերելքի որոշ միտումներ, որոնք 1998 թ. դարձյալ նվազեցին 0,5 %-ով: Ընդ որում, արտահանումը նվազել է 3,9 %-ով, իսկ ներմուծումը աճել է 0,4 %-ով: Դա բացատրվում է անցած տարի արտադրության ոչ արդյունավետ գործունեությունը: Այսպես, 1998 թ. նախորդ տարվա համեմատ արդյունաբերական արտադրանքի ծավալը նվազել է 2,5 %: Ընդ որում, սպառման ապրանքների արտադրության աճը գերազանցել է արտադրության միջոցների արտադրության աճին: Երևույթը առայժմ դրական է՝ թելադրված շուկայի և արտաքին առևտուրը ակտիվացնելու պահանջներով: Հուսադրող է այն, որ արտահանվում են ոչ միայն ավանդական ճյուղերի՝ ադամանդե քարերի, կոնյակի, արհեստական կաուչուկի արտադրանքները: Հեռանկարային են համարվում մեկուսացված էլեկտրահաղորդալարերի, ցեմենտի, հագուստի, օդային և հեղուկային պոմպերի, էլեկտրական գեներատորների և այլ արտադրանքների արտահանումը: Զգալի փոփոխություններ են կատարվում նաև ներմուծման կառուցվածքում: Դրական է այն, որ ներմուծման ընդհանուր կառուցվածքում նվազել է որակի տեսակետից վստահություն չհարձանող ապրանքների՝ շաքարի որոշ տեսակների, կարագի, մսամթերքների ներմուծման ծավալը: Արտաքին առևտրի հետագա ընդլայնումը մեծապես կախված է Հայաստանը առևտրական ուղիների հանգուցակետ դարձնելու խնդրից: Այդ գծով արդեն կան որոշակի երաշխիքներ, որոնց շրջանորհիվ գումարները մեր երկիր կմտնեն ոչ միայն սեփական արտադրանքի իրացումից, այլ նաև մյուս երկրների մաքսային մուծումներից:

Որպես տնտեսության աճի հիմնաքար, մեր կարծիքով, առայժմ անհրաժեշտ ուշադրություն չի դարձվում գյուղատնտեսությանը: Մինչդեռ ժողովրդական տնտեսության ճյուղերի մեջ գյուղատնտեսությունն այն առաջատար ճյուղն է, որը որոշում է արտադրությունը զարգացնելու և բնակչության կենսամակարդակը բարձրացնելու կարևորագույն հիմնախնդիրները: Զպետք է մոռանալ Հայաստանում արտադրվող գյուղամթերքների բարձր հատկանիշ-

ները և ներքին ու արտաքին շուկայում դրանց ընդունելությունը: Մինչդեռ մեր երկրում գյուղացին չի կարողանում վաստակել նույնիսկ իր հանապա-
գորյա հացը:

Զարգացած երկրներում վաղուց արդեն կիրառվում է գյուղատնտեսու-
թյունը ֆինանսավորելու պետական քաղաքականություն՝ և արտադրելու, և նույնիսկ... շարտադրելու նպատակներով: Իզուր չի ասված, որ երկրի հա-
րրատության երաշխիքը գյուղատնտեսության նկատմամբ վերաբերմունքն է: Իհարկե հասկանալի է, որ մեր երկիրը դժվար պայմաններում է, քիչ են մի-
ջոցները: Բայց մի՞թե եղած միջոցներից հիմնական հատկացումները կատա-
րելիս չենք կարող տարբերակել առաջնային ու երկրորդային խնդիրները և ուշադրության կենտրոնում պահել հատկապես պոտենցիալ հնարավորություն-
ների ճյուղերը՝ գործընթացը դարձնելով շարունակական: Դրանով հնարավոր
կդառնա նաև կանխել գյուղական (և ոչ միայն գյուղական) բնակչության
հսկայական արտագաղթը: Շարունակվում է անհասկանալի մնալ նաև այն
փաստը, թե ինչու Ազգային ժողովը գյուղատնտեսությանը հատկացված ար-
տասահմանյան արժույթային վարկի տոկոսները կենտրոնական բանկի մի-
ջոցով նախատեսում է գյուղացուն հասցնել առնվազն տասնապատիկ անգամ
բարձր տոկոսներով: Մի՞թե դա արդարացի է և ունի տնտեսական հիմք: Զը-
պետք է մոռանալ, որ այսօր Հայաստանը գյուղատնտեսական երկիր է, և
այդտեղ են գտնվում մեր հզորացման կռվանները: Պետք է նշել, որ, չնայած
դժվարություններին, 1998 թ. գյուղատնտեսական արտադրանքի ծավալը ա-
ճել է 13 % -ով:

Համարձակվելով բազմիցս ասված և կրկնված լինելու տհաճ պատհանու-
թյունից՝ գտնում ենք, որ այսօր առավել քան երբևէ Հայաստանի տնտեսու-
թյունը զարգանալու հեռանկարներ ունի հատկապես քիչ նյութատար ու է-
ներգատար և առավել աշխատատար ապրանքների արտադրության գծով:
Իհարկե դրանց մեջ քիչ չեն լինի համաշխարհային շուկային հետաքրքրող
արտադրատեսակները (ազգային ձեռագործ գորգեր, ոսկերչական, արծաթա-
գործական իրեր, սարքեր, գործիքներ, արվեստի գործեր և այլն):

Մեր կարծիքով հատուկ ուշադրության է արժանի նաև ոչ նյութական
արտադրության բնագավառը: Հայտնի է, որ զարգացած երկրներում աշխա-
տունակ բնակչության մեծ մասը (70—80 %) զբաղված է այդ բնագավա-
ռում, որտեղ և ստեղծվում է ազգային եկամտի զգալի մասը: Այդ տեսակե-
տից ուշադրության է արժանի Հայաստանում միջազգային զբոսաշրջությունը
զարգացնելու խնդիրը: Իր առանձնահատուկ բնաաշխարհագրական միջա-
վայրով, պատմական հուշարձաններով և արվեստի անզուգական գործերով
հարուստ է մեր երկիրը: Մնում է տուրիզմի ենթակառուցի. հյուրանոցային
համալիրների, մոթելների, տրանսպորտային միջոցների և ուղիների, հասա-
րակական սննդի, կենցաղսպասարկման, համապատասխան մասնագետներ
պատրաստող հաստատությունների և մյուս բնագավառների ստեղծումը, ո-
րոնք հաջողությամբ կիրականացվեն մասնավոր սեկտորի ձեռներեցությունը
շահագրգռելու և նպատակային ֆիսքայ մոտեցումներ ցուցաբերելու շնորհիվ:
Օր առաջ միջազգային զբոսաշրջության զարգացումը պատիվ կբերի մեզ: Հա-
յաստանը կդառնա ճանաչված երկիր և կնպաստի բյուջեի համալրմանը:

Մեր երկիրը դեռևս հարուստ է գիտահետազոտական կենտրոններով,
մեծ մասամբ ցրված, սակայն դեռևս հավաքագրելու ենթակա բարձրորակ
մասնագետներով, հիմնարար գիտությունների գծով անհրաժեշտ նյութատեխ-
նիկական հնարավորություններով, դրանք բազմապատկելու համար մարդ-
կանց պատրաստակամությամբ: Պատմությանը հայտնի են փոքր երկրներին
մեծ խնդիրները, որոնց լուծումը դրանց դարձնում է համաշխարհային գիտու-

թյան և ընդհանրապես առաջադիմության կրողները նշված բնագավառի զարգացումը նույնպես ունի իր նյութական հիմքը: Մնում է պետական մտածողություն ու աչակցություն: Խնդիրը գործը տեղից շարժելն է, և մի գեղեցիկ օրականատես կլինենք գիտական Հայաստանի իսկական վերածննդին: Այս գործում նույնպես հապաղելը ծանր հետևանքներ կունենա, քանի որ համալսարհային գիտությունը զարգանում է հսկայաբայլ, իսկ մեր մասնագետները տարիք են առնում, և շարունակվում է նրանց արտագաղթը:

Հասարակական արտադրությունը զարգացնելու և կատարելագործելու ընթացքում բացառիկ է աշխատավոր մարդու դերը: Մարդուն աշխատանքով ապահովելը և նրա կյանքի հետագա բարելավումը արդարությունը իրականացնելու հիմնական ուղին է: Հիրավի, գոյամիջոցների ստեղծումը ձեռք է բերվում մարդու աշխատանքի, դրա վերափոխիչ գործունեության շնորհիվ: Տվյալ դեպքում արդարությունը հանդես է գալիս որպես յուրաքանչյուրի և բոլորի առավել կազմակերպված տնտեսական գործունեության արդյունքները արդարացի բաշխելու հետևանք: Ներկայումս Հայաստանում ծավալված վերականգնողական գործընթացների հիմնական պահանջը ոչ միայն աշխատատեղերի ստեղծումն է, այլ նաև, դրան զուգահեռ և առաջին հերթին, արդարության սկզբունքի խեղաթյուրումների վերացումն ու համակողմանի պահանջների վերահաստատումը: Մարդուն անհրաժեշտ է ոչ միայն հաց, այլ նաև՝ հավատ վաղվա օրվա նկատմամբ: Մեզ այսօր հետաքրքրում է ոչ միայն ձեռնարկությունների (պետական թե մասնավոր) աշխատանքը, այլ նաև այն, թե ինչու սեփականաշնորհումից հետո կամ դրանից առաջ կազմալուծվեց այդ ձեռնարկությունների գործունեությունը: Կարծում ենք արդարացի կլինի, եթե պատժվեն աշխատանքում թափթփվածություն և հանցավոր անտարբերություն ցուցաբերող ղեկավարները, կամ որոշ նորաթուխ սեփականատերեր եթե ոչ քրեորեն, ապա գոնե նյութական պատասխանատվություն կրեն: Նախագահը պարտավոր է իրականացնել իր այդ նախընտրական խոստումը՝ դրանով իսկ փոքրիշատե վերականգնելով մարդու հավատը իր երկրի նկատմամբ: Չենք կարող արդարացի համարել օտարերկրյա վարկերն օգտագործելիս պետական մարմինների կողմից բնակչությանը անհրաժեշտ տեղեկատվություն չապահովելը: Դա արդարացի չէ և ամբողջությամբ շոշափում է այսօրվա քաղաքացիների, ինչպես նաև նրանց սերունդների ապագա շահերը: Իրազեկությունը տնտեսական գործերի ընթացքին մարդկանց հավատն ամրապնդելու, նրանց քաղաքացիական կեցվածքը արժանապատիվ կրելու, պատասխանատվության զգացումը մեծացնելու հզոր գործոն է: Ըստ Կենտրոնական բանկի եզրակացության, 1997 թ. վերջին 22 պետական պարտքը (որը շարունակում է աճել) կազմել է 694,26 մլն. ԱՄՆ դոլար կամ համախառն նեքթին արդյունքի 43,97 տոկոսը: Թիվը բավականաչափ մեծ է, եթե նկատի առնենք ժողտնտեսության այսօրվա իրավիճակը և փոքր՝ եթե հաշվի առնենք տնտեսության առջև ծառայած խոշորածավալ խնդիրները: Մեր կարծիքով պետական մարմինները մեծապես կշահին, եթե ժամանակ առ ժամանակ բնակչությանը իրազեկ դարձնեին այդ պարտքի ժամկետների, տոկոսադրույքների, օգտագործման ուղղությունների մասին: Դա իրավական պետություն ձևավորելու ժողովրդավարական սկզբունքների տարրական պահանջ է, արդար գործելակերպի գրավական:

Տնտեսական արդարության գաղափարի մեկնաբանումներն ու վերլուծությունը հնարավորություն կտան պարզել բնակչության եկամուտների չափը, նրանց կենսամակարդակը և դրա փոփոխության միտումները: Կենսամակարդակը բնակչության պահանջմունքների մակարդակն է, դրանց բավարարման աստիճանը: Որքան բարձր են բնակչության պահանջմունքները, որ-

քան դյուրութեամբ են դրանք բավարարվում, այնքան բարձր է կենսամակարդակը: Ընդ որում, կարևորվում են ինչպես նյութական, այնպես էլ հոգևոր պահանջմունքները: Եվ դա հասկանալի է. ժամանակակից աշխարհում մարդու հոգևոր պահանջմունքների բավարարումը նույնքան անհրաժեշտ է, որքան նյութական պահանջմունքներինը: Նշված խնդիրների խորը գիտական վերլուծությունը և դրանք իրականացնելու ուղիների բացահայտումը հնարավոր են արտադրության գործոնային վերլուծության և դրանց համապատասխան եկամուտների վերաբերյալ հավաստի նյութերի առկայության դեպքում: Աշխատանքի, կապիտալի, հողի, ձեռնարկատիրության դիմաց ստացվող եկամուտների համակարգի հաշվառման և հաշվետվության մակրոտնտեսական ցուցանիշների մշակումը տվյալ խնդրի համակողմանի վերլուծության անհրաժեշտ պայման է: Հանրապետությունում հաշվառման ու հաշվետվության համակարգի կատարելագործումը, համաաշխարհային շափանիշներին (ՄԱԿ-ի համակարգում ընդունված) համապատասխանեցումը առաջնակարգ են դարձրել ազգային հաշիվների, այդ թվում բնակչության եկամուտները ձևավորող գործոնային ցուցանիշների մշակումը: Հանրապետության վիճակագրության ու պետական ռեզիստրի նախարարությունը, արագացնելով այդ գործընթացը, մեծապես կբարելավի իրական պատկերի ցուցադրումը: Այժմ ստիպված ենք սահմանափակվել եղած սուղ նյութերով, որոնք ամբողջությամբ չեն արտահայտում առկա վիճակը:

Վերջին տարիներին տնտեսական դժվարությունների, բնակչության կենսամակարդակի իջեցման պատճառով շրջանառության մեջ է մտցվել մեկ մարդուն անհրաժեշտ «սպառողական նվազագույն զամբյուղ» հասկացությունը: Մեր հանրապետությունում այդ զամբյուղի պարունակությունը հաճախ սահմանափակվում է 1,5—2 տասնյակ ապրանքների թվարկումով (հիմնականում՝ ծառայությունների վարձ և ցածրարժեք որոշ սննդամթերքներ, հագուստ): Տնտեսագիտական հաշվետվություններում միայն պատահականորեն կարելի է հանդիպել տվյալ ժամանակաշրջանի նվազագույն սպառողական զամբյուղի վերաբերյալ համապատասխան նյութերի: Վերջին շրջանում վիճակագրական տվյալների առավել համարձակ հրապարակումը թույլ է տալիս կատարել որոշ եզրահանգումներ:

Ըստ տեղեկատվության, նվազագույն սպառողական զամբյուղի պարունակությունը կազմում է ամիսը 30 հազ. դրամ՝ մեկ շնչի հաշվով: Դա նշանակում է, որ շորս մարդուց բաղկացած հայկական ընտանիքը իր նվազագույն կարիքները բավարարելու համար պետք է ունենա առնվազն 120 հզ. դրամի ամսեկան եկամուտ: Մինչդեռ 1998 թ. բյուջետային հիմնարկներում միջին աշխատավարձը կազմել է մոտ 10 հզ., իսկ մյուս բնագավառներում՝ 20 հազ. դրամ⁵: Հայտնի է, որ ընտանիքի անդամների մեծ մասը կամ երեխաներ են, կամ ծերեր, որոնց ստացած նպաստների ու կենսաթոշակների շնչին գումարները քիչ բան կարող են ավելացնել այդ միջոցներին: Ըստ ՀՀ վիճակագրության պետական ռեզիստրի և վերլուծության նախարարության տվյալների, մեկ ընտանիքի միջին ամսեկան իրական եկամուտները 1998 թվականին կազմել են 100,45 ԱՄՆ դոլար 1995 թվականի 24,68 դոլարի դիմաց⁶, որը պահանջվող կենսանվազագույնի միայն կեսն է: Հասկանալի է, որ նման իրավիճակում բնակչության մի զգալի մասը գոյատևում է մեծ դժվարությամբ, իսկ մյուս մասն էլ՝ արտագնա աշխատանքի կամ արտասահման մեկնած հարազատների, բարեկամների և այլ օգնությունների միջոցով:

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 86:

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 85—86:

Այսպես երկար շարունակվել չի կարող: Հայ ժողովուրդը դարեր և հազարամյակներ շարունակ իր մեջ խտացրել է հսկայական կենսուժ, դիմացել պատմության բազմաթիվ փորձությունների, հաճախ հառնել մոխիրներից, ստեղծել իր և ապագա սերունդների նյութական ապահովությունը և այսօր՝ 21-րդ դարի նախաշեմին, արդեն մեկ տասնամյակ գտնվում է ծանր վիճակում: Հիմնական հարցը մարդկանց աշխատանքով բավարարելն է: Կրթական ամենաբարձր ցենզ ունեցող մեծ քանակության մասնագետներ այսօր իրենց գոյությունը պահպանում են պատահական եկամուտներով: Ըստ պաշտոնական վիճակագրության նյութերի, գրանցված գործազուրկների թիվը 1998 թ. վերջին 139 հզ. մարդ էր, որը 16 տոկոսով զիջում է նախորդ տարվա ցուցանիշը: Սակայն հայտնի է, որ գոյություն ունի նաև թաքնված (չգրանցված) գործազուրկների մեծաքանակ բանակ: Տարածված երևույթ է նաև հարկադիր արձակուրդների փաստը, որը ընդգրկում է շուրջ 90 հզ. մարդ:

Մանր է հատկապես աշխատունակ կանանց զբաղվածության խնդիրը: Այսօր կանայք կազմում են պաշտոնապես գրանցված գործազուրկների մոտ 70 %: Մինչդեռ իրավական, արդարացի հասարակության վիճակի գնահատման գործում կարևորագույն ցուցանիշ է կանանց տնտեսական խնդիրը:

Յավալի փաստ է նաև այն, որ գործազուրկների ընդհանուր թվաքանակի մեջ 18—58 տարեկան ակտիվ տարիքային մասը կազմում է ավելի քան 90 %, որոնց 36 %-ը ունեն բարձրագույն և միջնակարգ-մասնագիտական կրթություն⁷: Նման պայմաններում շարունակում է պահպանվել բնակչության արտազաղթի նյութական հիմքը:

Հասկանալի է, որ խնդիրները շատ են, իսկ դրանց լուծման հնարավորությունը՝ սուղ: Այնուամենայնիվ համոզված ենք, որ Հայաստանի Հանրապետությունը ի զորու է աշխատուժի հսկայական ներուժը օգտագործել արդյունավետ, դուրս գալ տնտեսական դժվարություններից և աստիճանաբար գնալ երկրում արդարություն հաստատելու ճանապարհով:

Л. Ш. МАРКАРЯН, М. В. МКРТЧЯН—Понятие справедливости и ее реализация в экономической жизни.—Реализация понятия справедливости является важной составной частью экономической жизни обществ. Ее последовательное осуществление способствует развитию производительных сил и повышению материального благосостояния людей, сохранению и умножению их духовных и нравственных ценностей.

В процессе перехода Республики Армения к системе рыночных отношений возникают противоречия и трудности, соответствующие данному периоду развития, преодоление которых требует мудрого подхода и больших усилий. В статье делается попытка выделить некоторые из этих противоречий.

Экономический подъем будущего общества во многом зависит от различных способов осуществления экономической справедливости, вопросов их внедрения во все сферы жизни общества.

⁷ Տե՛ս նույն ահղը, էջ 78, 79: